

Մասնագիտություն – Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա

011000 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» բակալավրի ծրագիրը մշակվել է հաշվի առնելով աշխատանքի շուկայի պահանջները:

Ծրագրի նպատակներն են ուսանողների՝ ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ստացումը բանկային, ապահովագրական և ներդրումային գործի, ֆինանսական կառավարման, արժեթղթերի շուկայի ոլորտներում: Ֆինանսական մաթեմատիկայի բակալավրը մասնագետ է, ով կարող է խորհրդատվություն տրամադրել ֆինանսների, ապահովագրական, բանկային, գործարար, տնտեսության ոլորտներում, վեր:ուծել և կանխատեսել ապագա սպասվող իրադարձությունները և դրանց հետ կապված ռիսկերն ու ֆինանսական հետևանքները: Մեր ինստիտուտի շրջանավարտները պահանջված են տարբեր ոլորտների և տեսակների ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսագիտական բաժիններում, ինչպես նաև դասախոսական և ադմինիստրատիվ պաշտոններում:

Ավարտելիս շրջանավարտին տրվում է բարձրագույն մասնագիտական կրթության պետական դիպլոմ՝ «Ֆինանսական մաթեմատիկայի բակալավր» աստիճանով: Բակալավրի դիպլոմը շրջանավարտին իրավունք է տալիս աշխատանքի ընդունվելիս զբաղեցնել այն պաշտոնները, որոնք ենթադրում են իրենց որակական պահանջներին համապատասխան բարձրագույն կրթության առկայություն, ինչպես նաև իրավունք է տալիս կրթությունը շարունակել մագիստրատուրայում:

Որակավորում	«Ֆինանսական մաթեմատիկայի բակալավր»
Տարվա սկիզբ	Սեպտեմբերի 1
Ուսման տևողություն (առկա)	4 տարի
Ուսման տևողություն (հեռակա)	5 տարի
Կրեդիտներ	240
Ամբիոն	Տնտեսագիտության և ֆինանսների

Պրակտիկա	կրեդիտներ
Ուսումնական պրակտիկա	4
Արտադրական պրակտիկա	8

Ամփոփիչ պետական հավաստագրում	կրեդիտներ
Պետական քննություն	8
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	8

Առարկայի անվանումը	կրեդիտներ
Հայոց պատմություն	4
Բարձրագույն մաթեմատիկա (Մաթեմատիկական վերլուծություն)	12
Բարձրագույն մաթեմատիկա (գծային հանրահաշիվ)	10
Հայոց լեզու և հայ գրականություն	4
Միկրոէկոնոմիկա	12
Օտար լեզու	12
Ռուսաց լեզու	8
Կենսագործունեության անվտանգություն	2
Ֆիզկուլտուրա	2
Ինֆորմատիկայի հիմունքներ	4
Հաշվապահական հաշվառում և վերլուծություն	4
Դիսկրետ մաթեմատիկա	4
Համալիր վերլուծություն	6
Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	6
Մակրոէկոնոմիկա	12
Սոցիալ- տնտեսական վիճակագրություն	4
Դիֆերենցիալ հավասարումներ	4
Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	6
Ակտուար մաթեմատիկայի հիմունքներ	4
Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ	4
Մենեջմենթ	4
Տնտեսամաթեմատիկական մեթոդներ	4
Ֆինանսներ	4
Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ	4
Կիրառական վիճակագրություն	4
Օպտիմալացման մեթոդներ	4
Էկոնոմետրիկա	4

Ֆինանսական մաթեմատիկա	4
Կուրսային աշխատանք	4
Ապահովագրական գործ	4
Ներդրումների հիմունքներ	4
Թվային մեթոդներ	4
Ակտուար հաշվարկներ	4
Կիրառական տնտես. Վերլուծություն SPSS և STATA ծրագրերի հիման վրա	4
Կորպորատիվ ֆինանսներ	4
Տնտեսության պետական կարգավորում	6
Ֆինանսական մաթեմատիկա	4
Էկոնոմետրիկա	6
Ակտուար հաշվարկներ	6
Խաղերի տեսություն	4
Անցումային շրջանի տնտեսագիտության հիմնախնդիրներ	2